ԱՔՕՏ

ԱՄԱՍԱԳԻՐ

ԸՍԴՔՅԻՆ ԲՅԶԱՆԴԱՑՒՆ ԳԵՂԵՑԻԿԻՆ
ԵՒ ՓԻԼԻՔՍԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԻ
ՀՐՈՎՔՆ ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ

ՑԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1867



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 9.

ԱԽՕՑ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 30
1867.

ԱՄԱԳԻՐ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, ԹԱՆԱՄԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆՇԽԱՐՔ ԱՋԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Երբ կը տեսնեմք Կիպրաւ Յովնան ներկայ ազգաժամբոյթիւնը ընդդէմ մեծազոյն Օսմանեան պետութեան, պատմութիւնը կը յիշեցնէ մեզ Կիպրոսի կղզւոյն յունական ազգաժամբոյթիւնը՝ որ 1608 ին տեղի ունեցաւ ընդդէմ Վրան։ Այն երկուքին նմանութիւնը ալ մի և նոյնն էր, այն է ազգային ազատութիւն ձեռք բերել և ինքնուրոյն կառավարութիւն մի հաստատել։ Սակայն այդպիսի ազգային ձգտումներուն եղող հանգամանքներն և պարագաները տարբեր էին։ Կիպրացւոց ազգաժամբոյթիւնը որ մեծազոյն մասամբ անզէն և օգնականի կարօտ եղող խառնաղանճ ժողովուրդն էր, ոչ իշխան մի ունէին և ոչ բանակ և ոչ ալ ուրիշ պատրաստութիւն, այլ ընդհակառակն էր ազեղոյ մի որ մարզական ոգի ունենալ կը ձևացնէր զինքը, և ոգեւոր հանդարտութեամբ համարձակ տասցած էր, և երբեմն ըզ ժլչիական արհեստի հետ հմուտ ըլլալ կը ցուցնէր՝ դեղեր մատակարարելով անոնց հիւանդներուն։ Կը թուի թէ նա գիտէր ի գիւղ և քաղաքէ ի քաղաք պտտելով ու կ'ըսէր, թէ "ուրիշ դէպքերն կարգացեր իմացեր եմ"; և Աստուծմէ հետս ազդեցութիւն եղած ինձ տեսլեան մէջ թէ Տաճկաց իշխանութիւնը վերջացաւ։ այդ ատենէն ի յետոյ նորա պիտի տպարանի և մեր ազգանամբ։ Եկեք ուրիշ գանոնք ջար-

դենք սպանենք և մեր երկրին անունց արմատը բնաջինջ ընենք »։ Ընդհն ապստամբութեան վարժուած և աղ-դային անցեալ փառքեր, թագաղարդ ձախտաներ և դաւադանակիր աջեր գիշեր ու ցերեկ երազող ժողովուրդ մի բառական է մեկին ի մեկ այդչափ խօսքով վառել բորբոքել, և պանդք ի գէն փութացընել։ Ութսուն հազար պատերազմիկ մարդեր ամիկ ժողովրդոց մէջէն պատրաստուած ոտքի եղած էին, և նշանին կը սպասէին Յորդանան Օամանցւոց։

Նոյն ժամանակներէն Վեսպասիան Հռոմայ մի, որոյ անունը կը վիսոէ մեզ պատմութիւնը, կարճ և զօրաւոր զօրութեամբ, արհեստիւ մեծագործ, որ Կատանդինա (Լեզուաց) իշխանանիստ քաղաքը կը բնակէր, և սոյն խռովութեան մէջտեղը կը պատերէր ոչխար ու տաւար ծախու առնելու։ Երկրորդ ձանձնալով նորա արիութենեն և երեւելի անձ մի ըլլալը, կը կանան համոզել ու սիրել որ իրենց հետ միանայ, և իրենց տէրը քաշէ Օամանեան բարեկեցիկ տէրութեան դէմ, ասած թէ ոչ, կ'ըսէին, զքեզ քու ընտանեացդ և զաւակացդ հետ չարաչար կը սպանենք։ Որ և իսկ խոստմունք և համոզմանայ խօսքեր չկարացին Վեսպասիանոս գլուխը դարձընել և նորա հաւատարմութեան ոգին խախտեցընել օտար ազգութեան մի համար բարեգութ Տէրութեան դէմ տէր չարժել, և Թիբերս իբր աբիւնեն ալ Թափել չնչին պատճառի մի համար, որու քնաւ պարծանք չըլիսի համարեր ապագային մէջ, այլ նախատինք պիսի բերեր իբր ոգին նորա հաւատարմութեան և տէր իբր տէրութիւնն ցոյց տուած հարազատ ծառայութեանց համբաւը ազատութեամբ, և ազգութեան ձախոյն վերայ չարխոնական անջնջելի մուր քաշել։ «Քանի լոյն ինձ, պատասխան տուաւ սիրասէր Հայը, որ այդ անիրաւ դործոյն մէջ հաղորդ ըլլամ ձեզ, որովհետեւ մեր ազգովին օտարացեալ ըլլալով մեր հայրենեաց երկրէն և Օամանեան տէրութեան հովանաւորութեան նեղքեր քնակած լինելով, չանդգնութիւն ըրած կ'ըլլամ թէ որ ըսածնիդ ընդունիմ. նաեւ եթէ Թագաւորն եւս լսելու ըլլայ թէ ձեզ հետ Հայոց ազդ մանակից եղած է, իմ պատճառաւս բոլոր իմ տառապեալ ու խեղճ ազգս սրոյ ձարակ կուտան և մնացեալը գերի կը տանին։ Նաեւ մեր և Օամանեան ազգին հետ դաշն ու երդումն ունիմք ըրած, որ ձեռք չվերցընենք և Թուր չքաշենք նորա դէմ»։

Այս խօսքերս երբ լսեցին Յոյնք՝ առիւծ դարձան և իրենց հուր բորբոքեցան. վաղեցին իսկոյն նորա վերայ, այնչափ զարկին որ կխաժռեն գերութենն լինկաս զուրկ զգայութենէ։ Ան չերնեն գլխաւորը հրամայեց որ գեռ շունչը վերայն չդադայած՝ փորը ձեղքեն և նորա լերդն ու սիրտը դուրս քաշելով մանր մանր բաժնեն ու աբևնաթաթախ ուտեն, որ խրեանց սիրտը զօրանայ։ Կարծես Թէ ասիկայ վարձաքար մի էր, որոյ վերայ ուղեցին իրենց տաբերը փորձել, և կամ առաջին յաղթութիւն կը համարէին անոնք պատճառի համար անմեղ արիւն Թափելը, և արդարոյն և համարձակ պատասխանոյ մի արեան արժողութեամբ։ Այսպէս գազանային կիրքերնին յագեցընելէն յետոյ խեղճ Հայուն մարմինն ալ կրակին մէջ նետեցին, բայց հաւատարմութեան մեծ նահատակին յիշատակը չկարացին բնաջինջ ընել։ Յաջորդակցին նաեւ նորա զաւակներն ու կինը, որ վախան Յունաց կրօնքն ընդունելոյ, զրանք միայն

տեղով և կիսրատի Յան կանանց հա-
դուստ հագուցին, նոյնպէս և ապա-
յոյ. և ասոր վերայ այնչափ փքանա-
լով կ'ուրախանային, որպէս թէ իրենց
քաղաքական նպատակին հասնելով մեծ
ու հարուստ աւարներու տէր եղած
ըլլան: Յետ այնորիկ թէ կինն և թէ
ապայքը Պաֆնու ըսուած փիլը նկե-
զեցոյ մի մէջ փակեցին, որպէս զի
չփախչի մինչեւ որ իրենք պատերազ-
մին հետ դառնան:

Խոսրէվ փաշայ, որ կիսրատի ընդ-
հանուր կառավարչն էր, Յունոյ ա-
պստամբութեանն լսած օրէն, ձայն
տալով բոլոր զօրքերն և զօրապետնե-
րը ի պէն կոչէց, կամաւորներ եւս և
կան նոցա յարեցան, և եղաւ մեծ բա-
նակ մի: Յունոյ անհաւատարմու-
թեան այն յարատեպ եղող դէպքը,
Հայոց իրենէ անոր ան Ր. Պօսան
ունեցած հաւատարմութեան հրապա-
րակաւ ապացուցանելու պատճառ մի
առաւ. վասն զի Խոսրէվ փաշային
բոլոր զօրքերն հետը տարած ժամա-
նակ՝ Կատանց բնակ քաղաքին պահպա-
նութիւնը հոն գտնուող Հայոց ձեռ-
քը յանձնեց, ապստամբութեան առ-
ջեւ միանգամայն որ ամենուն զգու-
շութեամբ պահպանեն իշխանական
քաղաքը Յունոյ յանձնուելնոյ դէմ,
մինչեւ իւր դառնայը: Հոն տեսնելու
էր Հայոց կարծութիւնը, որոնց ե-
րանելութեան մէջ կարծես թէ Խիլիկե-
ցոյ իշխանութեան ժամանակի պա-
տերազմական և պատերազմի գաշտե-
րուն մէջ մեծցող ու սնող իրենց նախ-
նիքներուն արիւնը դեռ չչքան կ'առ-
նար, ամեն մէկերնին մէկ մէկ պատ-
ուար դարձան և Օտեանցոց սուրը
ձեռքնին և հրացէնն ուսերնին այն-
պես կը հասկնին քաղաքին վերայ: Թէ-
պէտև իրենք առկառուր, բայց զօ-
րութեամբ և ուժով քառասնապատիկ ա-
ռաւելութիւն ունեցող խոյ մի մի
կրնային դիմադրել:

Խոսրէվ փաշայ իւր բանակաւ յան-
կարծ Յունոյ ապստամբութեան կեդ-
րոնատեղւոյն վերայ յարձակելով, թէ-
պէտև Յոյնք խմբեցան իսկոյն պատե-
րազմ տալու, բայց մէկ մի որ կիրթ և
փորձ առաջնորդ չունէին, երկրորդ
պատերազմական պաշար բաւական չու-
նենալով, "ոչ կարացին կ'ըսէ ժամանակա-
գիրը, ժամ մի ընդդէմ կալ Տաճկաց"։
որոնք անխնայ կոտորեցին խառնիճա-
ղանճ բազմութիւնը, իրը քառասուն
հազար ոգի, և մնացեալները փախեան
լեռները ու անտառները: Նոյն տեսան
խեղճ Յոյներն որ իրենց տհաս ու խակ
խորհրդոյ ապստիւնքը միաստակար եղաւ,
և ձեռնընկեր ունեցած քիչ շատ ապս-
տամբութիւնները փճանալնէն յետոյ ան-
թիւ մարդոց հոգիներն ալ վերայ տը-
ւին, անձնական վնասներն ակամայ վճ-
րելնոնք ղպատասխանելով, միջնորդութիւ
հաշտարար մարդոց ընդունելոյ Խոս-
րէվ փաշայ նոցա հեռանդութիւնը,
մոռնալով որ մարդկան կորստաբեր ար-
քունի գանձուն կորստաբեր է, վասն որոյ
և մեռեալ անձինքներուն վճահարկը
ողջ մնացողներին հրամայեց որ պա-
հանջեն, որ բաւական սարսի մնայ
այնպես:

Նոյն փաշային և զօրքը յաղթու-
թեամբ եւս կը դառնային, Պաֆնու
դիւղին անցնելու ժամանակին, սա-
կեղեցոյ մէջ արդիւնաւած երիտ
գործին կինն ու ապայքը, լսելով զօ-
րաց եւս դառնալը Թէքուրի և ուրա-
խութեան ազդարարներով, պօռալով և
կեղեցոյ մէջէն բոլոր իւր կանայն ու-
ժովն և յաղթութիւն կը հնչէր դիմա-
ւորելու քնդդէմ քրիստոնէութե:
Օտարացան զօրքերն ահեղ ձայ-
նէն և դէմդ ի կիսրատին դիմելով տե-
սան խեղճ կինն մի և ապրմելի գան-

նեղն իւր բոլորովքը պաշտած, որոնք օգնութիւն օգնութիւն կը գոչէին, և Յունաց բարեպաշտութեան ձեռքէն պատռել կը խնդրէին։ Երբ բարեգութիւն, որ սիրոյ մարդասիրական զգացմամբ լի էր, և քան զառաքելական վարդապետութեամբ անեղ ժողովրդ մի կը դպչի մարդկութեան արժանիքն և խղճի ազատութեան յարգը, լսելով կնկանք բերէն նորա դրլե խէն անց կացած բոլոր չարիքներն և անիրաւ ապստամբութեան հարցդ չգանելն հաւատարմութեան նա հատակ եղող իւր էրկան գժբաղդութիւնը, ոչ միայն փաշային՝ այլ և իւր զօրքերն և բոլոր ներկայ գտնուողմարդիկ սկսան գթութեան ազատունք թափել, մխիթարել զինքն և տղայքը յուսադրական խօսքերով, և իրենց հետ միասին ամենայն ապահովութեամբ և խնամքով տարին ի Եւգոշա և Հայոց ազգին ձեռքը յանձնեցին։

Վիրքոյի վանհվետականք որչափ որ անկասկած էին Հայոց հաւատարմութեան և միամիտ հպատակութեան վերայ 1571 Թուականին ի վեր, յորում Ժամանակի Վիրքոյ սերմերին Իսլամք օգնութեամբ Հայոց ազգին, և այն ժամանակէն ի վեր ի Եւգոշայ կամ Կաստանդնուպոլսոյ քրիստոնէից մէկ գրան պահպանութիւնը Հայոց յանձնուած էր, և անոնց ձեռքէն էր մինչեւ ի մօտ ատրիներս, որուն ամենայնիւ Կեսարացի Հայուն իրը ի կոզմանէ բամանդակ ազգին մահուամբ չափ ցոյց ատած հաւատարմութեան վկայութիւնը տեսնելով, և քան զևս սկսան պատուել պազդն Հայոց եւ արտօնութիւններ շնորհել նոցա։ Այն յարգն ու պատիւը դեռ մինչև ցայսօր կը վայելեն հանդերձ փաքրաթիւ ազգայինք, բայց երանի թէ, ինչպէս ուրիշ շատ հայաբնակ տեղեր, նոյնպէս և հոս հայ ժողովրդին իրենց մէջ եւս սիրոյ և հաւատարմութեան զգացմունք հաստատած լինէին. զիրար եղբայրաբար ընդգրկեին, այն կործանիչ և անարեր հաւատքեան իրենց մտաց մէջ տեղիք չտան. մեծը պզտիկին, ու պզտիկն իւր մեծին արժանաւոր եղած պատիւն ու յարգն ընծայեն, ուսկից կը ծագի ներդաշնակութիւն ազգային կառավարութեան գործոց և ընթացից մէջ, և այս ալ ծնունդ է բարօրութեան և յառաջադիմութեան ժողովրդեան մի՛ թէ ուսման, թէ քաղաքակրթութեան և թէ հաստատութեան շարքին մէջ. և այն ժամանակ կրնամք ըսել թէ ազգը կը յառաջադիմէ։

Կաստանդնուպոլսոյ քրիստոնէից մէկ գրան պահպանութիւնը Հայոց յանձնուած էր, և անոնց ձեռքէն էր մինչեւ ի մօտ ատրիներս, որուն ամենայնիւ Կեսարացի Հայուն իրը ի կոզմանէ բամանդակ ազգին մահուամբ չափ ցոյց ատած հաւատարմութեան վկայութիւնը տեսնելով, և քան զևս սկսան պատուել պազդն Հայոց եւ արտօնութիւններ շնորհել նոցա։ Այն յարգն ու պատիւը դեռ մինչև ցայսօր կը վայելեն հանդերձ փաքրաթիւ ազգայինք, բայց երանի թէ, ինչպէս ուրիշ շատ հայաբնակ տեղեր, նոյնպէս և հոս հայ ժողովրդին իրենց մէջ եւս սիրոյ և հաւատարմութեան զգացմունք հաստատած լինէին. զիրար եղբայրաբար ընդգրկեին, այն կործանիչ և անարեր հաւատքեան իրենց մտաց մէջ տեղիք չտան. մեծը պզտիկին, ու պզտիկն իւր մեծին արժանաւոր եղած պատիւն ու յարգն ընծայեն, ուսկից կը ծագի ներդաշնակութիւն ազգային կառավարութեան գործոց և ընթացից մէջ, և այս ալ ծնունդ է բարօրութեան և յառաջադիմութեան ժողովրդեան մի՛ թէ ուսման, թէ քաղաքակրթութեան և թէ հաստատութեան շարքին մէջ. և այն ժամանակ կրնամք ըսել թէ ազգը կը յառաջադիմէ։

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԱՑ ՎԱՆՈՒՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՔ

ԵՂԻՑԻ ԼՈՑՍ

(Շարունակութիւն և վերջ. տես Թիւ 8։)

«Հայոց (որ որ Յակոբայ եկեղեցւոյն վերայ ունեցած իրաւունքն միշտ իրաւունք է, թէ Հռոմայի Պապն հետ միացեալ ըլլան և թէ ոչ, բան որում անհատական է իրենց սխալանութիւնը և ոչ ընդհանուր քրիստոնէից յատկացեալ. և թէպէտ լսութեան Թագաւորութեան ժամանակ իրեք հերձուած, այսօր էլ կան թէպէտ և ասա գործէալ իրեք հերձուածք ըլլան, որոնք ամենայնիւ իրենց տուրացածքն եղած է միշտ, և երբէք չ. Պանտալէոնի ժ. դարուն հեղինակ Իսպանիոլ Պ. Պանտալեոն

Frat Lux !....

(Suite, et fin voir page 114.)

«Les droits des Arméniens sur le Sanctuaire restaient les mêmes, soit qu' ils se trouvassent unis, ou non, à la cour de Rome, leur propriété étant individuelle et non de la généralité des Chrétiens; et bien que considérés schismatiques pendant le Royaume Latin, Catholiques ensuite, et après schismatiques de nouveau, c' était toujours eux qui l' ont possédé; et jamais les Latins, partisans de l' Espagnol P. Pantaleo, auteur du XVI siècle, ou de

բան հեղինակին, կամ՝ Ալբարոտիի (1588) կատարելիք եզրակացութիւնք չիցին և ոչ պիտի կարենան ապացուցանել իրենց ստացուածքն եղած ըլլալը, և թէ դնեն նիւթերին յայտնի ապացոյց մի եղած ըլլալ Սպանիոյ հին թագաւորաց առատաձեռնութեանցն շնորհած ըլլալուն, որմէ և նշանակեն հիմայ "բոլորովին ջնջուած" անոր դրան զարդերն եղեր, կ'ըսեն, 1563 ին ։ Պանտալէոնի հան այցելութիւն ըրած ժամանակ։ Ասոնց անձին վկայութիւնն որ հաստատուն ապացոյց մի չունին, չիարեր մեր իրաւունքներն և վերցուիլ գրաւար ապացոյցներն ջնջել, որոնք վիճարանութիւն չեն վերցներ. Եթէկա եւ ընդունելու լուս ըլլալ՝ թէ Ֆիլիպոնեան Թագաւորին կին Իզապէլ Կաթոլիկ կոչուած Թագուհին իւր ընծանեցրած զարդարած կամ նորոգած ըլլալով դպին Սպանիոյ ազգութեան նշանները Հայ եկեղեցւոյ վերայ նկարուած ըլլան, որ իւր սուրբ պաշտպանին է (սուրբ Յակոբոս Գլխադրի)։ սակայն սա ապացոյցը կ'ելնէ միայն որ մերգասիրական պաշտպանութիւն մի ըրած կ'ըլլայ ան ի պատիւ, և ոչ թէ եկեղեցւոյ վերայ իրաւունք պնեհելու իմդիր կը ծագի։ Պաղեստինի մէջ հռոմէական կաթոլիկայ կրօնական տեղերը միմէ Գաղղիոյ պաշտպանութեան տակ չէն. բայց Գաղղիա և ոչ մէկ ժամանակ միաբէն կ'անցնի թէ այս պաշտպանութեանս համար իրեն սեփական են անոնք, և կամ օրինաւոր տէրերուն ձեռքէն զանոնք խլէ առնու։

"Կրնայ արդեօք մեկը ենթադրել թէ Սիոն լերան վերայ քաշուած բնակող Հայ կրօնաւորները յարձակողներ են, և Հ. Ժերամպի հետ արժէք տալով ըսել, թէ այս յարձակութիւնը 1808 թուականին սուրբ Գերեզմանի այրերէն յետոյ եղաւ՝ որու վերայ իրաւունք մի ունեցան, և Հ. Ժերամպին սուրբ Գերեզմանի վերայօք ըսածն միւս ամէն եկեղեցւոյ համար ըսել առնուց սուրբ Յակոբայ վանքն ի բաց հանելով որ անոնց առաջին բնակարանն է ։ ։ ։ ։ Աչի ժամանակ հարկ կ'ըլլայ մոռնալ, թէ Նիկողայոս Պոնձիպոնցի 1345ին Գաղղիացի անուց ձեռքը դրած է, և թէ Սիր տը Քոմոն 1418 ին իւր վերյուծիւնը խիստ յայտնի ու ճշդիւր եղանակով մի կը հաստատէ ըսելով. "Կրմէհինեները (Հայերը) Գաղգոթա լերան մեծարան մէջ, ուր է Տէառն մերոյ խաչուած տեղը"։ Թէ՝ նոյն Սիր տը Քոմոնը սուրբ Յովհաննու (Յովհաննու ծննդեան, քան արարչագործ Էյն-Քերիմ) այցելութեան եկեղեցւոյն մէջ գտաւ գրերը. Թէ՝ Խաչավանքը վերջապէս անցնելէն առաջ. պոնձ Գաղգոթայի եւս յարձակութիւնն անուց ձեռքէն, իրենց կը վերաբերէր 1384 ին քան առաջ Ֆրէսքոպալտիի. և Թէ՝ 1583 ին Ռատզիվիլի ուխտաւորութեան ժամանակ պաշտօն կը մատուցանէին սուրբ Հեղինէի Բիւզանդեան մատրան մէջ, Թէ պէտ և արդէն Գաղգոթայի կրօնաւոր լլան, ուր պ հին վերայ հետ և լատինք։

"Չեմ ուզեր մանր պարագաներու ձեռնամուխ լինել, որոնք պիտի ստիպեն զիս սուրբ Տեղեաց խնդրոյն վերայ վիճաբանելու, խօսքս կը վերջացը-

l' Alcarotti, (1588) n' ont pu prouver, et ne prouveront, qu' il leur ait appartenu; et que l' Eglise, aumoins, soit une démonstration éclatante de la munificence des anciens rois d' Espagne, qui l' auraient batie, et dont les armes, «presque entièrement effacées», en décoraient l' entrée, dit-on, vers l' an 1563, alors que le P. Pantaleo la visita. Le témoignage du P. Pantaleo, sans preuves à l' appui, ne peut détruire nos raisons et les documents précités qui les rendent indiscutables, et même en admettant, qu' enrichie ou reconstruite avec les présents d' Isabelle la Catholique, femme de Ferdinand roi de Castille, les armes de l' Espagne aient été peintes sur l' Eglise Arménienne, de son Saint protecteur, il n' en résulterait qu' une preuve de patronage officieux et honoraire, et jamais une question de droit sur l' Eglise elle-même. Les établissements catholiques romains de la Palestine ne sont ils pas sous la protection de la France? mais la France, malgré son protectorat, ne s' aviserait pas de prétendre que ces établissements dussent être par ce fait considérés lui appartenir, et spolier ainsi les propriétaires légitimes.

«Voudrait-on prétendre que les religieux Arméniens, relégués sur le Mont Sion, sont des usurpateurs, faire valoir avec le P. Geramb, que ce ne fut qu' après l' incendie du Saint Sépulcre, en 1808, qu' ils y eurent quelques droits; et ce que l' étonnant P. Geramb disait pour le Saint Sepulcre, le dire pour tous les autres Sanctuaires, sans en excepter celui de Saint Jacques, leur première demeure ?....— Il faudrait alors oublier, que Nicholas de Poggibonsi, en 1345, trouve le Calvaire en leur possession; et que le Sire de Caumont, en 1418, appuye son témoignage de la manière la plus formelle, en disant: «Les hermines (Arméniens) au mont de Calvaire en la chapelle où est le lieu où fut crucifié Notre Seigneur»; que le même Sire de Caumont les trouva dans l' Eglise de la Visitation, à Saint Jean (Ayn-Kerim); que le couvent de Sainte Croix avant d' appartenir aux Georgiens, qui leur usurpèrent aussi le Calvaire, leur appartenait en 1384, selon Frescobaldi; et qu' ils officiaient lors du pélérinage de Radzivill, en 1583, la chapelle bysantine de Sainte Hélène, bien qu' ils eussent déjà perdu le Calvaire, où étaient avec les Georgiens, les Latins.

«Je n' entrerai pas dans des détails qui me forceraient à discuter la question des Lieux-Saints. Je terminerai en disant, que pour détruire les droits

նեմ ըսելով՝ թէ Սիոն լերանը սուրբ Յակոբոս եկեղեցւոյ վերայ Հայոց ունեցած իրաւունքները ջերմ կերպով հաստատելու համար, քիչ մը աւելի զօրաւոր գրաւիչներ պէտք է ունենալ, որ կարող ըլլայ մարդս աղջամուղջի եւ դիտակաւոր թանձրամթերեն մի հատատ բրնեալ: Մենք հիմայ լուսաւորութեան դարու մէջ կ'ապրինք. լիայ կայ մի բայց նոյ միայն որ իւր ձեռքը իւր աչքերը կը ծակէ, աւա՛ղ, . . . : Դիւրաւ տեսան եղաւ Երիսաբեան Ջաղնաց հնարուած Օմար կոչի եղ խաւտասալի կայծեղեակ հրովարտակին, եւ անոր զոր էօժէն Պերէ սուրբ Տեղեաց վերայ դրած իւր տետրակին մէջ Լատինաց հնարէից, կ'ըսէ, Մոզաֆֆեր 1023 թուին: Ա՛յս Մոզաֆֆեր Գաւառուց իշխանը՝ որ Մամլուքաց առաջին հարուածն էր, 1259 եւ 1260 ին մէկ քանի դէպք թագաւորեց, բանի եր երկու հարիւր վեցսուն եւ վեց տարի ետքը: Ես Օմարայ հրովարտակը կոչեցի ըստուած գրելով գրուած չէ՝ ինչպէս պէտք էր որ լինի: Ի՞նչ տարօրինակ ունին Հայոց գէմ հանելու, եւ ոչ մէկ հատ:

«Վերջապէս քրիստոնեայք պէտք է մոռնան, որ Հայերն եւ ոչ ուրիշ քրիստոնեայ ազգեր Սալահատինեն առնուն Գերեզմանը ձախտ առնին ինչպէս անկանխակալ ոգւով կը վկայեն մեզ Անշինի արքայական տարեգրութիւնները, ըսելով. "Քրիստոնեայ Հայերը մեծ գումար պատուցանելով՝ Սալահատինեն գնոյ առին սեռնական Գերեզմանը եւ Նոյա Տաճարը»: Ու թող փոխարէն գոնէ ի նշան երախտագիտութեան կը պարտաւորին հնախանձիլ ատնոնց հարատեւութեան պրպտելորդեան վերայ, զոր ունին Երուսաղէմ միակ եւ սուրբ քաղաքին մէջ»:

ԳԱՒԻՈ ԿՈՒՐՄԱՆԻ

des Arméniens, au Sanctuaire de Saint Jacques sur le mont Sion, il faudrait posséder des document un peu plus capables de soutenir une saine et savante critique; nous vivons dans une époque de lumières, il n'y a d'aveugles que ceux qui se couvrent les yeux, hélas!....— On a eu bon march du prétendu firman accordé par Omar Iben-el-Khattab, aux Grecs Orthodoxes, et de celui, que dans sa brochure sur les Lieux-Saints, M. Eugène Borfait accorder aux Latins par Mozzaffer, en 1023. Le Melek el Mozzaffer Qottouz, de la première dynastie des Mamelouks, ne régna que de 1259 à 1260 deux cent trente six ans après!.... et le firman d Omar n'est pas, comme il devait l'être, en caractères coufiques. Quelles preuves a-t-on contre les Arméniens? -Aucune!

Enfin les Chrétiens doivent se ressouvenir, que les Arméniens, et non les autres sectes Chrétiennes, rachetèrent de Salah-eddyn, le St Sépulcre, d' après le témoignage impartial que nous fournissent les Annales de l' Abbaye d' Anchin: «Armeni Christiani; magno dato censi pretio Sepulchrum dominicum sua ecclesia et domini Templum a Salahadino redemerunt»; et qu' ils leur doivent au moins pour reconnaissance, de ne pas leur envier les rares Sanctuaires qu' ils possèdent encore dans la seule et Sainte ville de Jérusalem.»

CARLO GURMANI.

Ազգային երաժշտութիւն:

(Շարունակութիւն եւ վերջ, տես թիւ 8):

Բայց՝ ի վերոյիշեալներէն, մեր եկեղեցական երաժշտութեան խանգարման պատճառ քանի մը սեռնապատութեան արժանի կէտեր ալ կան, ինչպէս՝ եկեղեցւոյ երգեցողութեան բոլորովին ապստոյ վերայ թողուած ըլլալը, որ շատ հին սովորութիւն ալ չէ: Առաջ ալ շատ անդամ երգիչը կը խանգարեին. վասն զի շատ մանաւանդ բացառութիւններէ զատ՝ ապստոյ ոչ կարողութիւնը եւ ոչ ժամանակն կը նկատէ երգ մը պէտք եղածին պէս առնելու կամ եղանակին զօրութիւնն զգալու, հետեւաբար երգիչը շատ անգամ տպստոյ ընթացքը կամ ընդհատութիւնը կը յայտնացնէ, որով անոնց շատին վսեմութիւնը անզգալապէս կը կորսուի ի օր ըստ օրէ: Ջաղնաց երգեցողութիւնը, գլխաւորապէս ձայնեղութեան վրայ կռթիւնն ըլլալով, այն ալ կարճատ մէկ միայն զուարճութեան առիթ մը գտած է (1): Թէեւ եկեղեցական խնդիր մ՝ա համարուի, այլ երգի վերաբերութեան համար կը յիշենք նաեւ երգեցողութեան մասին ունեցած եկեղեցւոյ մէջ ալ քանի մը անհամաձայնութիւնները, ինչպէս երգի մը մի եղանի առնելը երգիչին ծանր եւ երգիչին յոգնած երգելու սահմանը, որով երգեցողութիւնը՝ ի հմմանդ կը քանդուի, եւ կամ այս ինչ երգը Թագաւոր ուրիշ մը երգել սահմանութիւնները՝ հակառակ ուշադրելի հրամանգին, այնպէս որ շատ եկեղեցի իրեն համար մոռնաւոր ան մը ունի ժամանակութիւնն:

Միեւնոյն ցաւալի ցաւագածներն բաւական համարելով՝ աւելի մանրամասն պարագաներ յայտնել, կը թողունք առ այժմ աւելորդ կը համարինք, սակայն քանի մը խօսք ալ ուղղելին նոյ էլ ցաւ ընելէ յառաջ՝ հետաքրքիր անոնց ուշադրութիւնը հրաւիրելու համար կը դնենք հոս սուրբ Երուսաղէմի Պատրիարքութեան ձեռագրի մը մէջէն խաղալ վերայ եղած քանի մը տողերը, նաեւ սպրի այնելէ առ առաքելութեան երաժշտութեան կիսաձայն ելլելէն մեկ համառօտ օրինակները, որոնց մեկը էֆանդի ի միտս ունենալով կարգերուն համեմատած եմ-

(1) Ձայնասոր մանկանց մասին խօսիլ կ'ենք ուշադրութիւնը արժանի է մանաւանդ գպրոցական տեսակետէ նոյնց համար, սակայն ուրիշ առիթի մը կը հետաքրքիր:

Անուանք եղանակաց. ձայնից երգոյ. գիւտ խնամոյից։



վերադիր. Արշաւան. Քարշ. Սաղարտիր. Վանդ. Կուռ. Զուարճիկ. Խազ. Դո-



ծրունիկ. Հաբ. Հաւասմունք. Կարճ. Բեր. Բազմազանակ. Ոգեմանուկ. Հաւասիկ.



Զանգակաձ. Հանդպող. Խուռնճ. Ոճանշարժ. Աւանձնաւորող. Ոճաւորող. Ծնեալաւորող. Շեշտ.



Ջարկ. Դիր. Լերկ. Խոնճ. Քաշ. Թաւթ. Սաւթ. Ծաղ. Բեր. Բնիկոլճան. Դակոլճան.



Լիսրճան. Խազ. Վերնախազ. Ներքնախազ. Ղեմ. Խազաւոյին. Քարքաշ. Փամփռեմ. Հայաձայն.



Թաշտ. Ծրունիկ. Գլոր. Բազմ Կարկեր. Վերքաշ. Միմնաւոր. Փուշ. Կլոր. Ցիւռ Ձգե։

(Ի լուսանի ԹՆԴ. որ են Թաւթ խիզ. Է. Ի դադարեք գլխաւորք են լսատ Է. եղանակաւորք գրոյն որ են այս ա՛. ե՛. է՛. ը. ի՛. ճայնեալք անբիւրեալք)։

Նախ ոք այսպէս ձայնիցէ. բերբ՛՛՛՛ էր ը՛՛ այս ձայնս գան. ի վեր ի սրտէն։ Ու մինչ զրն վազեմ ա՛՛ ա՛՛յ ա՛՛յ՛՛ երկնեալ է ոտէր. սա ի վեր գան ի բոլոր բերան նոյն որ կոչի առ Թաւշն։ Ու մինչ ոք երդեմ մի՛՛ ի՛ ի՛ ի՛՛՛ի՛՛՛ է ոտէր, սորա եւք ի քմայն ի դուրս գան։ Ով որ գոչէ ա՛՛ ա՛՛ ա՛՛ ա՛՛յ՛՛Ձ լեզուս. բերանն առաւ ի խուշակ գլխոյն եւ բակեր։ Ու յորժամ զրն վազիւ կոչէ. եւ ասէ. էմ՛՛ էմ՛՛ էմ՛՛ՁՁ. սա ի ծայրից առաջանայն քարշէ ի դուրս ձայնն։ Իսկ ոք մինչ երգեմ ը՛՛ ը՛՛ ը՛՛նգ քեզ է սկիզբն, սա ձայրի լերկաւին շուներն քարշէ ի վեր։ Ու մինչ ասէ ոք ա՛՛ՁՁ ւբան լսցաւ ի՛՛ի՛՛ի՛՛ք. սա վերիւս շուրթն առ իրեարս սղպեմ ձայրան։ Ու ասի՛՛ առնէն եւ բազմանան ի զանազան ձայնից տեսակս . . . . զոր ի մանր կանոց եկեղեցւոյ սակաւք ընդն գիտեն . . . (1)։



(2) Ի սրբոյս ձեւերիդ զիշերը չիւցան ըլալ կարգարանները չըլլալուն։ Եկեղեցւոյն մէջ ալ կեսերը բաւն ձայն եւ առաքակեսերը կիսաձայն են։

Իսկ սղպային նոր երգոց վերայ երկու գիտութիւնն կրնամք ընել. նախ առանց դիւրերուն մեծ մասը միօրինակ են, Հայաստանի եւ առհմանագրութիւնէ վերայ, ու շատ քիչ կը գտնուին զգացման, կրից եւ բնական գիրեցկութեան վերայ երգիլ, եւ գանձնելն ալ կամ գրարտուեն կամ շատ բարձր սճով, որալ եւ ընդհանրութեան անհամաձայն։ Ըստ մեզ, պէտք էր որ սղպային քանասաեղծք սղպային գրախտութեան համար աշխատած ատեն, քիչ մ՚ալ ու շատվը ըլլային ժողովրդեան արդի կեանքը եւ սեսկիները յարգել, եւ պէտք եղած ատեն անոնց նախապաշարմունքն անգամ իրենց դիւրեմ ընտրելով անոր բարոյական եւ ընկերական կեանց ուղղութիւններ տալ, որպէս եւ գիւրիմաց սճերով ընտանի երգիլ երգելով, ինչպէս ընտրած են այս սճը Սիկեմի, Դաւիտեանց, Ե-

հասիան և յ. Աբովեան՝ որ այս մասին ընդարձակ կը խօսի վ. Էջ. Հայաստանի յառաջաբանին մէջ. (տպ. ի Տիֆլ. 1858)։

Ժողովուրդ մը ոչափ ալ իւր ազգէ՝ նախնեաց ինչատակներէ և իւր վարչական օրէնքէ և սահմ վերաբերեալ երդերը սիրէ, տակաւին իւր ներկայ կեանքին և դգացման համեմատ երգեր կ'ուզէ. և քանի որ ասիկայ չկայ՝ ի՞նչ իրաւունք ունինք պահանջելու որ ղեւարթեանի մէջ զբօսանք և տրիւռեանի մէջ ափոփանք բնաւուած ասէն, ղարէ, Տանի՝ կամ ղիեին ֆեբհաթ ու աչքէ պրէիդ երգելու տեղ միայն արի՛ հայկազնի կամ գարուն Հայաստան երգէ։ Անիրաւութիւն է ըսել թէ ժողովուրդը ազգային դգացումէ չունենալուն՝ ազգային երգ չերգեր. վասն զի ժողովուրդը ազգասէր ըլլալու համար մարդ ըլլալէ չկրնար դադրիլ, հետեւաբար միայն պատմական ու վարչական երգերով չկրնար սորիլ։

Երկրորդ՝ նաեւ ասոնց եղանակները. մեծ մասը եւրոպական, և զբօսի ազգային և արեւելեան ճաշակի՝ ու նաեւ դժուար՝ որ հասկ թէ ձիւղ կրնայ երգուիլ։ Երբեք չի մտածուած արդեօք որ ամեն ժողովուրդ իւր ընդունակութեան առանձնին ու մանաւանդ ճաշակն ունի, և ամենէն կոչտ ժողովուրդն ալ իւր սրինգը խոտական երգէտնին հետ չփոխեր. և եթէ հարկ ալ ըլլայ ազգի մը ճաշակին մէջ փոփոխութիւն ընել, այն ալ միայն իրեն ընտանի եղած քաներէը մշակելով կ'ըլլայ և ոչ թէ մեղմամի նման շուտ մը կը ձուլուի, զոր և ոչ աշխարհակալք կրցած են ընել։

Այս նկատումներէը չըլլալուն, մինչեւ հիմայ ալ եղած մեր երգերը թէեւ ամեն վարժարանաց մէջ դաս կը տրուի և ամեն ազգային հանդիսութեան մէջ կ'երգուի, (այնչափ ալ ուրիշ ազգաց մէջ նմանը չտեսնուած չափահասութեամբ և ամեն անձնական առիթներու մէջ, որ մեր ձոյնասէր մտնկութիւնը կարծես երգելիներու խումբ մը ըլլային,) այսու ամենայնիւ այս երգերն գալրոյի աձին գուբս չեն կրցած երթալ և ընտանեկան կենաց մէջ մտնալ. ազգային երգոց սիրահարներուն անդամ շատը չուրխնեղով ու ճանկռտով զօանելէ ի զատ, կան նաեւ որը գումարներ ալ կը մտնեն առանց համար։ Ազգային երգ թելերուս եղանակներուն համար երբեմն եւրոպական եղյուժշտութիւն եղած տեղեր և կամ քանի մը մանրատրաց տուներէը կը լսուի, որ այս ալ ազգային ընդհանրութիւն չունի։ Ահա մեր ազգային նոր երգոց պակասները։ Վասնց ամենուն վերայ մեր կարծիքը սակաւ կրնամք ամփոփել։

Քանի որ փիչ շատ ազգային գրուշմ ունեցող եղյուժշտութիւն մը միայն եկեղեցւոյ մէջ ունինք, և ազգին այժմեան վիճակին մէջ եկեղեցի զատ կիզման մ'ալ չկայ, ուր հաւաքոյթն ամեն կարգի մարդիկ երգ, և ուր նեղ միայն կարելի է կանոնաւոր եղյուժշտութեան գեղեցիկ ճաշակը ընդհանրութեան մէջ տարածել, ուստի մեկ կողմէն այս երաժշտութեան դարգացմանը և եկուսեա եղանակներով հղծմանէ վերջ մնալուն աշխատելու, միանդամայն այն եղանակաց այն մանաւանդութիւնները որ երաժշտական օրինաց դէմ չըլլալով ազգային ձեւ ևր են, պահելու փոյթ տարած ատեն, մենք կազմէն ալ ազգային մանաւանդ ընտանեկան երգոց համար առնելիք ամեն օտար եղանակաց կատարելն նմանելու, արեւելեան այնպիսի եղանակները պէտք է չնտրել, որը մեր ազգին ընդունակութեանը յարմար ըլլալով նաեւ եւրոպական դաշնակի ալ կը յարմարին. և ասոնց վերայ պէտք է նաեւ դիւրընտրել ու այնպէս ազգ. հայերէն երգեր, որ ընդհանուր ժողովուրդին հասկնալի կ'ըլլան. քայ ի սակի նաեւ դպրեվր երաժշտութիւնը հանդիսաւոր տեսակէտ գիտութիւնը; և չափերուն (ամանակի) գործնական կանոնները եւ թէ կարելի է գտնել ամեն երաժիշտ գաւառաւանդուղղելու վրայ տանել. ասոնք ընելու համար այնքան մեծ գժուարութիւն չկայ, քանի որ ձայնական երաժշտութեան գաղ. ասեն գպրոցայ մէջ կայ արդէն, միայն թէ մտնաւոր ուշադրութիւն ընելով կանոնաւոր ուղղութիւն մը տալու է այս ուսման։ Այս կերպով ժողովրդեան մէջ կրնայ ընդհանրանալ գեղեցիկ երաժշտութեան ճաշակը, և թերեւս օր մը գոնուի հանճար մը որ ազգային երաժշտութեան նոր ոգի և կենդանութիւն տայ. և մինչեւ որ այնք չըլլայ, թէեւ ազգային երգ ի՛ւնենանք, վասն զի գրականութիւն ունինք, այլ ազգային երաժշտութիւն երբեք. և ապագային էրթալութիւն, ապագան էրթ և ապագան էրթելը բառերն ալ ցամքը բառեր, և մեր ազգայինը ալ տեղ մը հանկիպ, տեղ մը ղայիր և տեղ մ'ալ թատրոնի գերասան պիտի մնան։

Ինչպէս և ազգին ըսինք՝ այն գիտողութիւնքը մանաւանդ հետաքրքրութեամբ հետաքնած ընդունելով հը յուսամք որ թերեւս առիթ մը ունենանք օր մը աստղ գործնական մասին վերայ ալ տեղեկութիւններ հրատարակել։ Սիրելի է մեզ հաւատալ որ ոչ միայն ազգային երգիչք և գաւառաց, այսց պարարտ է ի մօտայ հոգ տանել այս մասին, այլ և եկեղեցականք և գործակք ալ երբեմն իրենց ուշադրութիւնը պիտի դարձնեն այս առարկային վերայ։ Վակ մեք կը յայտնենք ահա՝ որ այս նիւթին վերայ թէ՛ անձամբ և թէ թղթակցութեամբ ինչ հարցում և առարկութիւն որ ըլլայ՝ պիտի ընդունինք ու մեր կարծիքը յայտնենք։

Եւ եթէ ամենց առաջոյ թուի ազգային երաժշտութեան վերայ այսքան կաւելորութիւն տալ, կը յիշեցնենք ըստ Անգղիացի հնդկեանի մը թէ "հովին որ կոշմէն փչելը իմանալու համար, ոչ թէ քար մը այլ փետուր մը կը նետուի օդին մէջ։ Նմանապէս և ժողովրդի մը ոգեղէն ուղղութիւնն ոչ թէ ծանր պատմութիւններով ու ժամանակագրութիւններով՝ այլ թեթեւ երգերով կ'իմացուի,,։ Ինչպէս և քաղաքական կասկածներով բանտարկեալ ժամանակիկ անձեր հանճար մ'ալ ըլլալով բանտին մէկ ուրիշ կողմէն իրեն վիճակիկ մէկուն սրամտութիւ ու վանէ կերպիւ երգելը, ըսաւ. "Ա՛յն սիրան ուրիչ այս ձայնը կ'երգէ; չկրնար չար սիրտ մը ըլլալ,,. վասն զի ըստ Հիւրերի "Ձայները երգ չունին,,։

Ներսէսեան, 1867 Մայիս 25։

Եղիա Մ. Տ՚ներսէսեան։

ԿՐՕՆԱԿԱՆՔ

ՍԱՄՈՒԷԼ ՌԱՔԲԻ ԵՒ ԻՒՐ ԳԻՐՔԸ

(Շարունակութիւն. տես թիւ 8։)

ԳԼՈՒԽ Ժ.Զ.

ԱԶՈՂՈՒԹԻՒՆ՝ Հրեից իրենց անհաւատութեան համար արհամարհելը, և Հեթանոսաց հաւատքէն համար ընդունելը։

Կը վախնամ, Տէր իմ, որ երբ մեք մեր մէջ զմեզ Յակոբայ և Իսրայէլի պէս դիքն եմք կ'ըսեմք, Աստուծոյ ըսած խօսքն կատարուած ըլլայ. գլուխ կե. "Ապահով գիտէ Ասուած, ամէ Իսրայէլ, և օտար ազ նաւնով կանչէ" (1)։ Կը դողամ երբոյ որ մեք ամէն ծառաներին ըլլամք, ինչպէս ըսաց Մովսէս ԻՀ գլխոյն մէջ. "Հեթանոսներն գլուխ ըլլան, և ան հաւատ ժողովուրդն ապրին մէջ" (2)։ Ինչպէս որ մեք հիմայ այնպէս (անհաւատ) եմք հազար տարիէն առելի է։ Ընոյ համար ըսաց Յեսայի մարգարէն եւս ԺԱ գլխոյն մէջ. "Ի յուսի երկիրն Ասուծոյ հաւատքոյն, և յորդե ծովու ջրին պէս" (3)։ Ընոյ համար ըսաց Մովսէս եւս Գ Թագ. Ը գլխոյն մէջ. "Տէր Ասուած, երբ այլազգին գայ քո օրհնեալ սուրբ տուներդ, մինչ ըսկ անոր՝ տէր Ասուած իմ, որպէս դի բոլոր երկիրն վախնայ քու անուանէդ Իսրայէլի ժողովրդին պէս" (4)։

Ու բնաւ ինչպէ կը պարծիմք, Տէր իմ, և ինչու համար հեթանոսներն կ'արհամարհեմք, երբ Սաղմոն մարգարէն զանոնք մեզ Ասուծոյ երկիրղին և սուրբ տան մէջ հաղորդակից ըրաւ, և զմեզ գուցէ երբ անարժան դուրս ձգեց Ասուած այն տներն, և անոնց տուաւ նոյն տուները. որոյ համար Մովսէս եւս ըսաց. "Ասպէս կ'ըսէ տէր Ասուած. ըսուի բոլոր երկիր սրտով վառքմին" (1)։ Որոյ համար և Դաւիթ ըսաց ԻՆ սաղմոսին մէջ. "Գան ու դառնան դէպ Ասուած երկիր բոլոր ծայրերը, և հազար ազգերը" (2)։ Ընոյ համար ըսաց Եսայի եւս Կ գլուխոյն մէջ. "Ով Դաւթի տուրը տուներ. քու լսդ գայ, և Ասուծոյ վառքը քո մէջդ ծագած է. և հեթանոսք քու լուսով պտըտին, և թագաւորք քու արեւելից պայծառութիւնդ։ Կ երկու աչքդ քու բոլորտիքդ, և տես. ասոնք ամենքն ժողովեցան եկան քու վերադ։ Այլազգի որդիք քու պարիսպներդ շինեն, և նոցա իշխանքը քեզ ծառայեն" (3)։ Ես սրոնք են, Տէր իմ, այն այլազգի որդիքն որ Տէր

(1) Եւ զձէզ Տէր սառակեսցէ, և ծառայիցին իմոյ կոչեսցի անուն նոր։ Եսա. կե. 15։

(2) Այդն մեծի խօսքը հայերէն Թարգմանութեան մէջ լաւ կը բացատրէ. "Եկին որ ի քէզ էին, ելան քան զքեզ վեր ի վեր, և դու ինչպես ի վայր ի վայր։ Նա տապի քեզ փոխ, և դու ոչ տայիս նմա փոխ. նա եղիցի գլուխ, և դու եղիցիս վերջ" ։ Բ. Օրէն. ԻԸ. 45։

(3) Զի լցաւ երկիր ամենայն գիտութեամբ Տեառն իբրեւ ջուրս բազումս որ ծածկեն զծով։ Եսա. ԺԱ. 9։

(4) Եւ օտարտոմն որ ոչ իցէ ի ժողովրդենէ քումմէ Իսրայէլի, և նա եկեալ իցէ յերկրէ հեռաստանէ. ուր՝ և լսիցէ զանուանէ քումմէ մեծէ, և զձեռանէ քումմէ հզօրէ, և զազգէ քումմէ ձգեալ. և եկեսցէ յաղօթս կացցէ ի տեղւոջ յայսմիկ. և դու լուիցես յերկնից ի պատրաստ բնակութենէ քումմէ, և արասցես ըստ ամենայնի զոր և կարգասցէ առ քեզ օտարտոմն. զի ծանիցեն ամենայն ազգք երկրի զանուն քո, և երկիցեն ի քէն որպէս և ժողովուրդ քո Իսրայէլ։ Գ. Թագ. Ը. 41—43։

(1) Եւ լցուն վտառք Տեառն զամենայն երկիր։ Թուոց. ԺԴ. 21։

(2) Յիշեսցին և դարձցին առ Տէր ամենայն ծագք երկրի։ Երկիր պագցեն նմա ամենայն տոհմք ազգաց։ Սաղ. ԻՆ. 28։

(3) Լուսաւորեաց լուսաւորեաց Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն ի վերայ քո ծագեցաւ։ . . . Համբարձ շուրջ զքեզ զաչս քո, և տես ժողովեալ առ քեզ զամենայն մանկունս քո. զի եկին հասին ի հեռաստանէ որդիք քո և դստերք քո ի վերայ ուսոց նոցա բարձեալ բերիցին։ . . . Եւ շինեսցեն որդիք այլազգեաց զպարիսպ քո, և թագաւորք նոցա ընծայեսցեն քեզ։ Եսա. Կ. 1. 6. 10։

բոլ տուն են եկան, եթէ ոչ հեթանոս ներն որ կուց ծառայեցին և Աստուծոյ օտարացան։ Ասոր համար ըսաց՝ թէ տեր ըսաւ տանը լքուսիլ պտըտին։ Ես ինք եմք այն տունէն մերժուողներն, և խաւարի մէջ մնայողներն, ինչպէս որ մնացած եմք մինչեւ յայսօր հաղար տարիէն ի վեր։ Դարձեալ նոյն մարգարէն ընտր գրէն ընտր անունդ համար կը գլուխ մէջ. «Ընդն զըր չհանչցիր՝ պիտի կանչես, և հեթանոսներն՝ որոնք զքեզ չտեսան, քեզ գան»[1]։ Ինչպէս և գործով կը տեսնեմք այս բանս այսօր հաղար տարիէն աւելի է. որովհետեւ մեզ որուած օրինաց համեմատ իրար կուած Քրիստոսն եկաւ, և օրինք չհանչցող հեթանոսներն եկան անոր, և նա նոր օրինքներ տուաւ անոնց՝ մարդուբ և տէրը։ Ինչ խե գլուխ մէջ կ'ըսէ. «Մխթարեցան և նոցա թագաւորներն Աստուծոյ հաւատովն ժողովեցան»[2]։

Ինչ կը վախեմ, Տէր իմ, որ նոյն գլուխ մէջ ըսուածն անունդ համար է. «Յորդուիցեք ամենքդ ալ, և եկէք հեթանոսներ՝ որ Աստուծոյ ձեռօքն ալ զատեցաք, հեթանոսներէն և ժողովուրդն»[3]։ Ինչ Հոսէ կե գլուխ մէջ ըսաց. «Ինդրեցին զիս անոնք որ ալ ուսքուց զիս չէին հարցաներ, ու գըտան զիս անոնք որ չէին խնդրեր»[4]։

